

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ*

Համար 27

* *

Բերա, 28 հունիս 1918.

Երվանդ սիրելի.

Ստացա հունիս 1-ի վերջին նամակդ. ուրախ եմ առողջությանդ և հաջողությանդ լուրերուն համար: Աշխատութենն ետքը այժմ հանգիստ ունիս, չեմ գիտեր թե ո՞ւր և ի՞նչպես պիտի անցընես:

Ազգապատումին 9 և 10 պրակները հղած եմ արդեն ժամանակին. և ցարդ ստացած կըլլաս գրաքննական արգելարանեն ազատված:

Անոր մասին վերջին դատաստանդ ինձի համար գոհացուցիչ է. ժողովրդական հրատարակությանց սիրահարություն ունիմ, գիտական ոճի հավակնությունը չունիմ:

Էջմիածնե լուրեր կառնեմ Սուքիաս արքեպիսկոպոսե, Կարապետ եպիսկոպոսե և Հուսիկ վարդապետե. այս անգամ Բենիկ վրդ. ալ գրեր էր Տփղիսե. բայց ոչ մի մխիթարական երևույթ: Կոմիտաս վրդ. ալ Կովկաս եկավ, գուցե տեսնաս:

Ես եղելությանց հպատակելու սկզբունքով կգոհանամ հնարավորն ընելով. և կկարծեմ թե իմ գրականը օգտակարագույն ալ է: Միայն թե վեց շաբաթ է անգործ եմ տպարանին հրկիզվելուն պատճառով, որ դեռ նորեն չկարգադրվեցավ: Այդ կոտրածությունը և ամառվան տաքը չեն ներեր ինձ լրջորեն աշխատիլ. կուզեի երկրորդ տասնյակ պրակները հրատարակել, և աշնան խմբագրության դառնալ:

Կրոնական ծրագիրը պետք չէ՞ր արդյոք, որ բոլոր վարժարաններու համար համաձայն և համաչափ ըլլար: Մի՞թե Ալեքսանդրապոլի համար հատուկ է ծրագիրդ*:

Ես հանգիստ եմ, անցածն ալ գրեցի: Քիչ-քիչ ազգային շրջանակին մեջ կմտնեմ: Ամեն շաբաթ Բերայի ս. Հարությունը և Ղալաթիո ս. Լուսավորիչը կըքարոզեմ. երբեմն ուրիշ եկեղեցիներ ալ կհրավիրվիմ, դպրոցներու քննությանց կերթամ, քահանայից լսարանին կդասախոսեմ, Ազգային ժողովի կանդամակցիմ, կրոնական ժողովե ալ կուզեն անցընել:

Այսչափ այս անգամ: Օրհնաձայն ողջույններ Քեզ և Քոյոցդ

Մաղ. արք. Որմ.:

*
* *

Համար 28

Բերա, 28 նոյեմբեր 1918.

Սիրելի Երվանդ.

Կոմիտաս վրդ. այստեղ եղած ատեն հունիս 28-ին համառոտ գիր մը գրած էիր, որուն դեռ չեմ պատասխանած:

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1969 թվականի №№ Գ, Ե—Զ-ից:

* Խոսքը Ալեքսանդրապոլի պետական ռուսական 8 դասարանյան Առևտրական դպրոցի համար ծրագիր կազմելու մասին է: Այդ ծրագրով նախատեսվում էր V և VI դասարաններում ընդարձակել հայոց եկեղեցու պատմությունը՝ նրա մեջ զուգահեռաբար մտցնելով նաև ամբողջ հայոց պատմությունը: Այն ժամանակները առանձին հայոց պատմություն անցնել ռուսական պետական միջնակարգ դպրոցներում ոչ մի կերպով և պայմանով հնարավոր չէր: Ծրագիրը ներկայացված էր Ամենայն Հայոց կաթողիկոսին և ստացել էր նրա հավանությունն ու հաստատությունը և պիտի դասավանդվեր իհարկե միայն հայազգի և հայոց եկեղեցուն պատկանող պատանիներին:

Դուն կցավակցեիր որ հրդեհը արգելած է Ազգապատումին շարունակությունը. քիչ մնաց որ բոլորովին պիտի մեռներ, զի ես անդիի աշխարհք երթալոց եղա, մինչև բժիշկներն ալ հույսերնին կտրելու չափ. բայց Աստուծո ողորմությամբ դեռ կենդանի եմ և իբր երեք ամիս դադարե ետքը կամաց-կամաց գործելու կսկսիմ:

Դեռ բոլորովին կազդուրվելու պետք ունիմ, և բժիշկներ ու բարեկամներ կպահանջեն չաշխատիլ և չհոգնիլ. Congertion cérebrale էր հիվանդությունը:

Ազգապատումին մինչև 18-րդ պրակը հղած եմ. գործը հանդարտորեն կշարունակե: Վերջին ատենների պատմությունները ավելի նորություններ երևան կհանեն:

Ողջույն սիրո Քեզ և Քոյոցդ:

Այսչափով գոհացիր այս անգամ

Մաղ. արք. Օրմ.:

*
* *

Համար 29

Բերա, 20 փետրվար 1914.

Սիրեցյալ Երվանդ.

Բավական երկարատև լռութենե ետքը կստանամ հունվար 28-ի նամակդ, և ուրախ եմ լավ լուրերդ լսելով:

Ես բավական կազդուրված կզգամ զիս, բայց միշտ զգուշությամբ ծանր տաղտապանքներե, և պարտավորիչ և հուզիչ պաշտոններե: Բոլոր գործունեությունս կենտրոնացնելով Ազգապատումին շուրջը, որուն երկրորդ մասին հրատարակությունը լրացնելու մոտ եմ, մինչև ցմահ Դանիելի 1808-ին, և հետո պիտի սկսիմ 19-րդ դարը գրել: Եթե այդ մասին օգտակար տեղեկություններ կամ աղբյուրներ կամ հիշատակարաններ կարենաս ցույց տալ, շնորհակալությամբ պիտի ընդունիմ:

Ազգապատումին 16-րդն ալ դրկած եմ, և այս անգամ ալ 17-րդը կհղեմ. նույնպես 14-րդն ալ կրկին անգամ, որ անշուշտ կորած է:

Մայրավանեցիին մասին Կարապետ եպիսկոպոսի գրածը ստացա, բայց կարդալու պարապ չունեցա: Երբ որ վիճաբանության մտնես, նայե որ պատշաճից սահմաններուն մեջ մնաս, և ականջներ խայթող բան չգրես:

Ողջույն սիրո Քեզ և Քուկիններուդ: Աստված ուրախ և երջանիկ պահե:

Մաղ. արք. Օրմ.:

*
* *

Համար 30

25 ապրիլ 1914. (պոստքարտի վրա).

Սիրելի. Շնորհավորությանցդ կպատասխանեմ համառոտ քարթով՝ բազմապիսի զբաղումներով շրջապատված: Իսկ կնիքի* մասին ապրիլ 3-ին գրածներուդ կվերադառնամ գրել, երբ որ մտադրությամբ քննելու պատեհ գտնեմ:

Օրհնաձայն ողջույն Քեզ և Քոյոց

Մաղ. արք. Օրմ.:

---

* Խոսքը Կարապետ եպիսկոպոսի հրատարակած «Կնիք հավատո» դավանաբանական հատվածների ծողովածուի մասին է: